

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ
ՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿՆԵՐԻՆԵՐԸ

1990-ական թվականներին հայ ժողովրդի և հայոց պետականության պատմության մեջ բացվեց մի նոր էջ, երբ հայ ժողովուրդը վերականգնեց իր՝ այնքան բաղձալի անկախությունը: Չնայած բազմաթիվ դժվարություններին՝ նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ինքնուրույն ու հզոր պետության ստեղծման ու զարգացման համար: Ցանկացած պետություն հզոր է ոչ միայն իր սոցիալ-տնտեսական ու ռազմական ուժով, այլ նաև մշակույթով ու կրթությամբ:

Այսօր կրթության դերը ժամանակակից աշխարհում զգալիորեն աճել է: Կրթության համակարգը սերտաճել է հասարակության այլ ինստիտուտների հետ: Արդյունքում, հասարակական միջավայրը լուրջ ազդեցություն է ունենում կրթության վրա:

Կրթական համակարգի գործունեությունը հատկապես դժվարանում է անցումնայաին շրջանում, քանի որ նման պայմաններում կրթության խնդիրը դժվարությունների է հանդիպում առաջին հերթին իր առաքելությունը հասկանալու հարցում: Պատմությունը ցույց է տալիս, որ հասարակական ճգնաժամի հաղթահարման միջոցներից մեկը կրթությունն է, որը օգնում է հաղթահարել հնի ու նորի խզումը:

Անցումային շրջանում կրթության համակարգի առջև խնդիր է դրվում ճկուն լինել և արագորեն արձագանքել սոցիալական նոր իրողություններին: Սակայն հասարակությունում կան տեսակետներ, ըստ որի կրթությունը պահպանողական ոլորտ է, ինչը նշանակում է, որ կրթությունը չի կարող իր վրա վերցնել փոփոխությունների առաջամարտիկի դերը:

Բոլորի կողմից ընդունված է, որ կրթական համակարգին բնորոշ է շատ մեծ իներտություն, նորամուծությունների հանդեպ դիմադրություն: Դա բարդ մեխանիզմ է, որի հիմքը կազմում է մարդկանց ներքին գործունեությունը, որն էլ ունի իր սեփական տրամաբանությունը, դինամիկան և հատկությունները: Այսպես, օրինակ, էմպիրիկ (փորձնական) ճանապարհով հայտնաբերվեց, որ երբ մանկավարժական փորձի մեջ առաջանում է որևէ նորամուծություն, ապա անցնում է ավելի քան 10 տարի, մինչ այդ փորձը ստանա որոշակի տարածում և միայն կես դար անց այն ստանում է համընդհանուր ճանաչում: Որպես կանոն, կրթության մեջ նոր գաղափարները հաստատվում են շատ մեծ ուշացումով, իսկ նրանց տարածումը պահանջում է մեծ ժամանակահատված: Այս ամենը բնորոշ

է նաև Հայաստանի կրթական համակարգին, որը լինելով խորհրդային կրթական համակարգի ածանցյալը, ժառանգել է նրա ինչպես դրական, այնպես էլ բացասական հատկությունները:¹

Անկախության առաջին տարիներին անհրաժեշտություն առաջացավ մշակել ազգային դպրոցի սկզբունքները: Դպրոցը պիտի ապահովեր աշակերտության դաստիարակությունը ազգային ոգով և կազմակերպեր ուսման գործընթացը գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա:

Վերջին 15 տարիներին Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում զգալի փոփոխություններ են արձանագրվել: Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ստանալ կրթություն: Այդ իրավունքը նրան տրվում է ՀՀ Սահմանադրությամբ: Հայաստանի Ազգային ժողովը ընդունել է «Կրթության մասին» օրենքը և մի շարք այլ նորմատիվային ակտեր, որոնք ուղղված են կրթության ոլորտում իրավական դաշտի ստեղծմանը: Այդ փոփոխությունների շրջանակներում ընդունվել են բազմաթիվ օրենքներ, կարգեր ու նորմատիվային փաստաթղթեր: Այդ բոլորի արդյունքում փոփոխվել է կրթության կառավարման համակարգը, ընթացքի մեջ են այլ բովանդակային փոփոխություններ: Համապատասխան փաստերի հիման վրա կարելի է նշել, որ համակարգում հսկայական փոփոխություններ են արձանագրվել, սակայն մտահոգիչ է, որ շատ դեպքերում էականորեն չի բարելավվել վիճակը, հաճախ այն կրել է ծևական բնույթ՝ չհանգեցնելով նոր աշխատառժի և մտածելակերպի արմատավորմանը (օրինակ՝ ծնողական խորհուրդների, ուսանողական խորհուրդների գործունեությունը):

Անցումային շրջանում միշտ անհամապատասխանություններ են առաջանում նոր իրողությունների և մարդկանց մտածողության միջև: Կան երեք գործոններ, որոնց հարաբերակցությունից է հիմնականում կախված կրթական փոփոխությունների ընթացքը՝ հիշողություն, երևակայություն և գործողություն: Քանի որ մեր հասարակությունում հիշողության գործոնը գերակա է երևակայության նկատմամբ, այդ իսկ պատճառով հիշողությունն է, որ մեծապես ազդում է մարդկանց գործողությունների վրա: Հիշողությունն անհրաժեշտ է ամուր կանգնելու համար, սակայն այն խոչընդոտում է զարգացմանը: Հիշողության վրա հիմնված հասարակությունը վախենում է փոփոխություններից: Հայտնի մարդաբան Մարգարիդ Միդը վերլուծելով ավանդական հասարակության իրողությունները, նշում է. «փոփոխություններն այնքան դանդաղ էին տեղի ունենում, որ պապիկները զրկելով նորածին թռնիկներին, չէին կարող նրանց

¹ Ը Նահապետյան, Կրթական համակարգը Հայաստանում, Հայաստան. Ռեսումնասիրություններ և վերլուծություններ, Երևան, 2005, էջ 168:

համար պատկերացնել այնպիսի ապագա, որը տարբեր լիներ իրենց անցյալից»:² Իսկ երեխաների ապագան տարբերվում է պապիկների ապագայից, որը անհրաժեշտ է հաշվի առնել կրթության գործընթացում:

Երեկայումս Հայաստանի կրթական համակարգի հիմնական տարրերն են.

1. Նախադպրոցական կրթություն՝ մտուր (2-3 տարեկան երեխաների համար), մանկապարտեզներ (3-6 տարեկան երեխաների համար),
2. հանրակրթական համակարգ՝ տարրական դպրոց (1-3-րդ դասարաններ), միջնակարգ դպրոց (4-9-րդ դասարաններ), բարձր դպրոց (9-11 –րդ դասարաններ),
3. մասնագիտական կրթություն՝ նախամասնագիտական – տեխնիկական կրթություն (պրոֆտեխուսումնարաններ), միջին մասնագիտական կրթություն (տեխնիկումներ), բարձրագույն մասնագիտական կրթություն (բարձրագույն ուսումնական հաստատություններ),
4. ասպիրանտուրա³

Անցումային շրջանի հիմնախնդիրներից մեկը տնտեսական ճգնաժամն էր, որը բացասական ազդեցություն ունեցավ կրթական համակարգի այս բոլոր տարրերի վրա: Եթե 1992 թ. կրթությանը հատկացվում էր ՀՆԱ-ի 7.2 %, ապա 1994թ. այն ընդհամենը 2 % էր: 1995 թվականից այդ ցուցանիշը աստիճանաբար աճել է և 2006 թ. հասել 3.23 % -ի, որը դեռևս ցածր էր:⁴

Անկախության տարիներին կտրուկ նվազեց նախադպրոցական հաստատությունների թիվը: 1991թ. մանկապարտեզ հաճախել է 71300 երեխա, 2001թ.՝ 44400, 2000թ. Հանրապետությունում գործել է 764 պետական նախադպրոցական հիմնարկ (ՆԴՀ), որոնցից 428-ը՝ մտուր- մանկապարտեզ, 332-ը՝ մանկապարտեզ, 2-ը՝ դպրոց-մանկապարտեզ: 1999թ. համեմատ ՆԴՀ քանակը նվազել է 80-ով: Պետական ՆԴՀ ընդհանուր քանակից մարզային և համայնքային ենթակայությունն է, 23-ը՝ գերատեսչական: Գործող ՆԴՀ հաճախել է 46379 երեխա, նրանցից՝ 24062 աղջիկ (1999թ.-ին համապատասխանաբար 52901 և 24838): Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հիմնարկներում (1-6 տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 17.2 %: Գործել է 2326 դաստիարակչական խումբ, տեղերի քանակը կազմել է 75180: Սեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 20 երեխա, փաստացի զբաղվածությունը՝ 61.7 %:⁵

² Купельцова и Мур зөмчөө, М., 1988, сmp. 233.

³ Բ. Նահապետյան, նշվ աշխ. էջ 168:

⁴ Մարդկային զարգացման ազգային զեկույց. 2006 թ., Կրթությունը Հայաստանում, նախագիծ, էջ 5:

⁵ ՀՀ սոցիալական վիճակը 2004 թ., էջ 18:

Տնտեսական ճգնաժամը բացասաբար անդրադարձավ նաև դպրոցական համակարգի վրա: Ֆինանսավորման ու աշակերտների թվի շարունակական նվազմանը զուգընթաց ավելացավ դպրոցների և աշակերտների թիվը:

Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տրամադրած ամփոփ տեղեկատվության՝ 2000-2001 ուս. տարում Հայաստանում գործել են 1407 ցերեկային հանրակրթական, գիշերօթիկ հանրակրթական դպրոցներ, վարժարաններ և հանրակրթական ծրագրեր իրականացնող այլ կրթօջախներ: Ըստ իրականացվող կրթական ծրագրերի՝ ընդհանուր միջնակարգ կրթություն են իրականացնում 1242 դպրոցներ: Դպրոցների 61.5 % գտնվում են գյուղական, մնացածը՝ քաղաքային վայրերում:

2000թ. հանրապետությունում գործել են նաև 25 ոչ պետական դպրոցներ, դրանցից 22-ը՝ Երևանում, 1- ական՝ Լոռիում, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում:⁶

Վատ վիճակում են գտնվում նաև դպրոցական շենքերը: Դպրոցական շենքերի 80% կարիք ունի վերանորոգման կամ հիմնավերանորոգման:⁷ Վատ վիճակում են գտնվում նաև դպրոցների ջրամատակարարման համակարգը, չունեն մշտական հեռախոսայի կապ:

2000-2001 ուս. տարում հանրապետության դպրոցներում դասավանդել են ավելի քան 57 հազ. ուսուցիչ, որոնց 83 % կանայք են: Ուսուցիչների մի մասը չունեն մասնագիտական կրթություն: Դպրոցական համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2003թ.-ից իրականացվեց օպտիմալացման ծրագիր, որի արդյունքում նվազեց դպրոցների և ուսուցիչների թիվը: 2003-2004 ուս. տարում Երևանի պետական դպրոցներում ուսուցիչների թիվը եղել է 10918 ուսուցիչ, ապա 2005-2006 ուս. տարում այն հասել է 11193:⁸

Տնտեսական ճգնաժամը բացասաբար անդրադարձավ նաև մարզերի, գյուղերի երեխաների ուսումնական հաստատություններում ընդգրկվածության վրա:

Սակայն երկրի տնտեսական ճգնաժամին զուգընթաց աշխատանք տարվեցին հանրապետության բարձրագույն կրթության հետագա զարգացման ուղղությամբ: Բարեփոխումները ներառում էին կրթության կառուցվածքը, բովանդակությունը և կառավարումը: 1995թ. հունիսի 12-ին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց, ըստ որի հանրապետության 3 բուհերում (Երևանի պետական համալսարան, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, հայկական գյուղատնտեսական ակադեմիա) սկսեց կիրառվել

⁶ ՀՀ սոցիալական վիճակը 2004 թ., էջ 18:

⁷ Նույն տեղում, էջ 19:

⁸ Նույն տեղում, էջ 20:

կրթության եռաստիճան համակարգը՝ բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա:⁹

Ըստ ՀՀ վիճմախարարության ամփոփ տվյալների՝ 2000-2001 ուսումնական տարում հանրապետությունում գործել է պետական 19 բարձրագույն ուսումնական հաստատություն (ԲՈՒՀ) և 8 մասնաճյուղ (1999-2000 ուս. տարում համապատասխանաբար 16 ր 10), որտեղ սովորել է 43615 ուսանող, նրանցից 26178 –ը կան 60 % սովորել են վճարովի ուսուցման, իսկ 17437 կան 40 % պետպատվերով համակարգում:¹⁰ Ուսուցման հիմնական ձևը ցերեկային է. հեռակա ուսուցման բաժանմունքն ունի միայն Հայկական գյուղատնտեսական ակադեմիան: Պետական բուհերում ուսանողների 98.1 %-ը ուսանում է հայերեն, 1.7 %-ը՝ ռուսերեն և 0.2 %-ը՝ այլ լեզուներով:¹¹

Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում որակավորման նոր համակարգի (բակալավր՝ 4 տարվա ուսուցմամբ և դիպլոմավորված մասնագետ՝ 5 տարվա ուսուցմամբ) անցնելու կապակցությամբ 1999 թ. նախորդ տարվա համեմատ զգալիորեն ավելացել է չըջանավարտների թվաքանակը: Կրթաթոշակ ստացել են 14728 ուսանողներ:

1999թ. հանրապետության բուհեր են ընդունվել 307 օտարերկրացիներ (39 %- կանայք), ավարտել են 141-ը (40%):

Հանրապետության բուհերում մինչև 2000 թվականը սովորել են 1039 օտարերկրացի ուսանողներ (որոնցից, կանայք կազմել են 40%):¹²

Տարբեր բուհերում դասավանդող դասախոսներից 685-ը (այդ թվում՝ 87-ը կանայք) ունեն պրոֆեսորի, իսկ 1829-ը (404)՝ դոցենտի կոչում:

Հանրապետությունում գործել են նաև ոչ պետական 82 բարձրագույն ուսումնական հաստատություններ, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության պետական և ոչ պետական բուհերի 8 մասնաճյուղեր: Նախորդ տարվա համեմատ ոչ պետական բուհերի թիվը պակասել է 2-ով:¹³ 2001 թ-ին նախորդ տարվա համեմատ ոչ պետական բուհերի թվաքանակը կազմել է 17.111 մարդ, որոնց 67.9 % կանայք են:¹⁴

2001 թ-ի տվյալների համաձայն պետական և ոչ պետական 90 բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում և 8 մասնաճյուղերում 2000-2001 ուս. տարում ընդունվել է 15455, սովորել՝ 60726,

⁹ «Կրթությունը Հայաստանում», Երևան, 2006, էջ 17:

¹⁰ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001թ. հունվար-հունիս, էջ 136:

¹¹ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թ., էջ 139:

¹² Նույն տեղում, էջ 141:

¹³ Նույն տեղում:

¹⁴ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2001թ. հունվար-հունիս, էջ 138:

ավարտել՝ 9784 մարդ:¹⁵

2000թ. հանրապետությունում ասպիրանտուրա է ընդունվել 283 մարդ՝ նրանց 65.4 %-ը արտադրությունից կտրված: 2000թ ասպիրանտուրայում սովորել է 992 մարդ՝ նրանցից 54.3 % արտադրությունից կտրված: Ավարտածների թվաքանակը կազմել է 310 մարդ, որոնցից 49.3 %՝ արտադրությունից կտրված:¹⁶

Ավարտածներից թեզի պաշտպանությամբ հանդես է եկել 127 մարդ, թեզը ներկայացրել է պաշտպանության 84 մարդ (23 կանայք): Գիտության թեկնածուի գիտական աստիճան հայցողների թվաքանակը կազմել է 1012 մարդ (532՝ կանայք), նրանցից 200 (56 կանայք) պաշտպանել են թեկնածուական թեզ:

2000թ. դոկտորատուրա ընդունվել է 8 մարդ (5 կանայք), նրանցից 6՝ բժշկական, 2՝ բանասիրական մասնագիտությամբ: Դոկտորանտների թվաքանակը կազմել է 20 մարդ, (6-ը կանայք): Դոկտորանտների թվաքանակը գերակայել է առողջապահության ոլորտում: Դոկտորատուրան ավարտել է 12 մարդ (3 կանայք), որոնցից 1 պաշտպանել է դոկտորական թեզ:¹⁷

Կրթական համակարգի վերոհիշյալ փոփոխությունները որոշակի զարգացման հեռանկարներ են խոստանում: Համակարգում վճարովի ուսուցման ներմուծումը իր հետ բացասական դրսևորումների հետ միասին բերեց նաև դրական ձեռքբերումներ: Հնարավորություն տրվեց որոշ չափով պահպանել ուսումնական գործընթացը՝ հատկապես դպրոցական և բուհական կրթական համակարգը տնտեսական ճգնաժամի, շրջափակման ու պատերազմական պայմաններում:

Այսօր էլ, չնայած տնտեսական որոշակի դժվարությունների, հայ ժողովուրդը կրթությունը համարում է իր առաջնահերթ խնդիրներից մեկը, որին էլ մեծ ուշադրություն է նվիրվում:

¹⁵ Նույն տեղում, էջ 139:

¹⁶ Նույն տեղում, էջ 139:

¹⁷ Նույն տեղում, էջ 140: